ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Կոշտ թափոնների տեղական կառավարման պանավորման ուղեցույցի մշակում» ծրագիր

Կոշտ թափոնների տեղական կառավարման պլանավորման Հայաստանյան փորձի ուսումնասիրություն

«Կոշտ կենցաղային թափոնների տեղական կառավարման
պլանավորման ուղեցույցի մշակում
և ուղեցույցի կիրառման համար վերապատրաստման
կարիքների գնահատում»
ծրագիր

Պատրաստել են՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ և Հարություն Ալպետյան, առաջատար հետազոտող
Հուլիս 28, 2020թ.

Սույն ծրագիրն իրականացվել է ՀԱՀ Քաղաքականությունների մշակման և հետազոտությունների հիմնադրամի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Շվեդիայի կառավարության կողմից՝ ՀԱՀ և ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ: Հետազոտության մեջ արտահայտված տեսակետները և կարծիքները միայն հեղինակներինն են, և չեն արտացոլում կողմերից որևէ մեկի պաշտոնական քաղաքականությունը կամ դիրքորոշումը:

Ծրագրի կայքէջ՝ https://ace.aua.am/hy/waste/planning_guidelines

Բովանդակություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.2 ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ

1.3 ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.3.1 Աղբահանության պլանների կառուցվածքն ու բովանդակությունը

1.3.2 Աղբահանության պլանների մշակման մեթոդաբանությունը

1.4 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽԿԻՆ ԿԿԹ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽԿԻՆ ԿԿԹ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄՇԱԿՎԱԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. Հայաստանում աղբահանության պլանավորման փորձի ամփոփ վերլուծություն

1.1 Աղբահանության կառավարման պլանավորման ներկա իրավիճակի ամփոփ նկարագրություն

Հայաստանի տարածքում աղբահանություն իրականացվում է 501 համայնքներից 443-ում: 58 գյուղական համայնքներում դեռևս չի մատուցվում աղբահանության ծառայություն: Ընդ որում, աղբահանության համակարգում չընդգրկված 58 գյուղական բնակավայրերի բնակչության թիվը կազմում է 46000, այսինքն կարելի է փաստել, որ հանրապետության բնակչության 1,6 տոկոսին չեն մատուցվում աղբահանության ծառայություններ[1]:

Հայաստանի գրեթե բոլոր համայնքներում աղբահանության եկամուտները չեն ծածկում ծախսերը, ուստի ծախսերը մեծամասամբ փոխհատուցվում են համայնքի բյուջեով սանիտարական մաքրման համար նախատեսված գումարների հաշվին, քանի որ, օրենքով սահմանված կարգով, համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով) կամ արտաբյուջետային հաշվից՝ չտարանջատելով սանիտարական մաքրման աշխատանքների ֆինանսավորումը աղբահանության համար գանձվող գումարից: Համայնքներում չի կատարվում տնտեսագիտորեն հիմնավորված աղբահանության ծառայության ինքնարժեքի հաշվարկը: Նման հաշվարկը հնարավորություն կտա իմանալ մեկ անձի հաշվով աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղադրման ինքնարժեքը և համայնքներին թույլ կտա իրականացնել պլանավորում ինքնածախսածածկման հանելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁ

Արարատի մարզի «Վեդի» միջհամայնքային միավորումը, որը 2016թ. օրենսդրական փոփոխություններից հետո վերագրանցվել է որպես «Վեդի համայնքների միություն (միավորում)» ՀԿ, աղբահանության ծառայություն է մատուցում Արարատի մարզի 15 համայնքներին՝ իր իսկ կողմից ստեղծված «Մաքուր երկիր» ՍՊԸ առևտրային կազմակերպության միջոցով:

Միավորման կազմի մեջ մտնող 15 համայնքներում առանձին համայնքային ոչ առևտրային կառույց ստեղծելու կամ աղբահանության ծառայությունը այլ առևտրային կազմակերպության միջոցով իրականացնելու փոխարեն, համայնքները ստեղծել են մեկ կառույց, որին փոխանցվել է աղբահանության բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունը, և այդ կառույցն ապահովում է մատչելի, որակյալ ծառայության մատուցում ավելի ծախսարդյունավետ եղանակով:

Յուրաքանչյուր համայնք որպես մասհանում համայնքների միությանը վճարում է հաստատուն գումարներ՝ անդամավճարի տեսքով՝ համայնքի 1 բնակչի հաշվով 3 դրամ յուրաքանչյուր ամիս: Օրինակ՝ Վեդի քաղաքի համար, որի բնակչությունը պաշտոնապես կազմում է 11,675 մարդ, ամսական վճարը, ըստ փաստացի բնակվողների թվի (9,584), կազմում է 28,750, իսկ տարեկան՝ 345,000 ՀՀ դրամ: Անդամավճարը հիմնականում վճարվում է մեկ անգամ՝ տարեկան կտրվածքով:

Աղբահանության ծառայության գինը տատանվում է ըստ համայնքների և կազմում է ամսական 120-200 ՀՀ դրամ յուրաքանչյուր բնակչի համար/մեկ շնչի հաշվով: Բնակչության թվով ամենամեծ Վեդի համայնքի բնակիչների համար այն կազմում է ամսական 150 ՀՀ դրամ: Վեդի համայնքում աղբահանությունն իրականացվում է ամեն օր, իսկ մյուս համայնքներում (գյուղական բնակավայրերում) ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան շաբաթը մեկ անգամ:

Միավորման կազմի մեջ մտնող բոլոր համայնքներն ունեն մեկ ընդհանուր աղբավայր, որը նախկինում եղել է Վեդի համայնքի վարչական տարածքում, իսկ հետո, վարչական սահմանների ճշգրտման արդյունքում, հայտնվել է Դաշտաքար համայնքի տարածքում, որը նույնպես միավորման անդամ է:

Համայնքներում տեղադրված է ընդամենը 280 հատ աղբարկղ կոշտ կենցաղային թափոնների համար: Հիմնականում աղբը հեռացվում է առանձնատներից շրջիկ աղբատար մեքենայով հավաքելու միջոցով:

[1] Հայաստանի Հանրապետության աղբահանության համակարգի ռազմավարության նախագծի 20-րդ կետ.



Պատկեր 1 *- Թափոնների կառավարման և սանիտարական մաքրման ծախսերի դիմաց հավաքված վճարների մասնաբաժինը (ըստ մարզերի)*

Աղբյուր՝ *ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն (2020): ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: Հայաստանի ամերիկյան համալսարան և «LIFE» հիմնադրամ: Հասանելի է հետևյալ հղումով https://ace.aua.am/waste/wga*

Բացակայում է աղբի հավաքման, տեղափոխման և տեղակայման իրական արժեքի հաշվարկը: Աղբահանության ծառայության դիմաց վճարվող գումարի չափը համայնքի ավագանու կողմից սահմանվում է առանց տնտեսական հաշվարկի, հաճախ այն չհիմնավորված, երբեմն՝ խորհրդանշական գումար է, որը պայմանավորված է սոցիալական (բնակչության անվճարունակություն) և քաղաքական (ընտրություններ) դրդապատճառներով: Արդյունքում՝ աղբահանության ինքնարժեք չի որոշվում, որից բխում է խնդիրների մի աբողջ շղթայի ճիշտ ըմբռնման և դրանց լուծման բացակայությունը:

Աղբահանության վատ կառավարման մեկ այլ օրինակ է, երբ այն չի իրականացվում համայնքի ամբողջ տարածքում՝ չնայած աղբահանությունը համանքի պարտադիր լիազորությունն է: Ծառայության անբավարար ծածկույթը հնարավորություն չի տալիս ապահովել վճարների լիարժեք հավաքագրում: Շատ են այն դեպքերը, երբ նույնիսկ աղբահանության ամբողջական ծածկույթ ապահովելու դեպքում բնակչության և իրավաբանական անձանց վճարելու պատրաստակամությունը ցածր է: Միջազգային և հայաստանյան փորձը ցույց է ալիս, որ դրա պատճառը մատուցված ծառայությունների ցածր որակն է: Հայաստանյան իրավիճակում գոյություն ունի նաև մտածելակերպի ու հոգեբաության խնդիր, որ առաջացել է տասնամյակների ընթացքում: Միշտ աղբահանություն նկատմամբ վերաբերմունքը եղել է որպես կեղտոտ, նվաստալի, «ամենաստորին խավերին» բնորոշ գործունեություն: Չի ձևավորվել աղբահանության կառավարման խնդիրը ճիշտ արժևորելու մշակույթ, որը նույնպես վճարելու պատրաստակամության բացակայության պատճառներից է:

Պատշաճ ծառայության մատուցման դեպքում էլ ինքնածախսածածկման հասնելու համար հատկապես փոքր բնակչությամբ համայնքներում աղբահանության վճարները կարող են աճել: Եվ որքան էլ վճարելու պատրաստակամությունը բարձր լինի, վճարումը կարող է դժվար լինել բնակչության համար: Հետևաբար, բնակչության խտությունը կարևոր ցուցանիշ է պատշաճ ծառայության դիմաց վճարները մատչելի պահելու համար:

Թափոնների անարդյունավետ կառավարման կարևոր խնդիրներից է համայնքներում աղբի տեսակավորման և իրացման կամ հնարավոր վերամշակման պրակտիկայի գրեթե բացակայությունը:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁ
Հայաստանում պլաստիկ թափոնների վերամշակման լուրջ փորձը իրականացվել է 2018թ. ԵՄ «Տարածքային զարգացման պիլոտային ծրագրի» շրջանակներում (PRDP) ֆինանսավորված **«Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում»** ծրագրով:

Առաջին անգամ Հայաստանում կիրառվեց նորարարական պոլիմերաավազային տեխնոլոգիա, ներկրվեց հոսքագիծ, որ մեջ պլաստիկ թափոնները անցնելով եռակն հալեցման գործընթաց, «պարուրում» են ավազահատիկները ձեւավորելով համասեռ զանգված: Այդ զանգվածը այնուհետեւ հիդրավլիկ մամլիչի ճնշման տակ վերածվում է շինանյութի՝ մայթերի սալիկներ, եզրաքարեր, տանիքի ծածկ և այլն, որոնք սովորական (բետոնային) նմանակների համեմատությամբ առավել բարձր որակական հատկանիշներ և շինանյութի շուկայում աճող պահանջարկ ունեն:

Արտադրամաը գտնվում է Կապանում, իսկ հումքը՝ պլաստիկ թափոնները ձեռք են բերվում Վայոց Ձորի ու Սյունիքի 8 խոշոր համայնքներից, որտեղ ծրագրի շրջանակներում ներդրվել է կենցաղային թափոններից պլաստիկի տարանջատման, հավաքման ու մամլման ենթակառուցվածք:

Մանրամասները հասանելի են հետևյալ կայքէջում՝ https://www.euneighbours.eu/hy/east/eu-in-action/stories/hayastanowm-arajin-angam-plastik-taponnerits-sinanyowt-kstanan https://www.youtube.com/watch?v=HRqipRau31M

Աղբի տեսակավորումը հնարավորություն կտա զգալիորեն կրճատել հեռացվող աղբի ծավալները, հետևաբար և կիջնի դրա հավաքման, հեռացման և տեղադրման ինքնարժեքը, բնակչությունից գանձվող վճարի չափը: Տեսակավորված աղբը կարող է երկրորդ կյանք ստանալ՝ վերադառնալով համայնքային տնտեսություն, դեռ ավելին, իրացումից գոյացած միջոցները կարող են ուղղվել աղբահանության ծախսերի հետագա նվազեցմանը: Տեսակավորման սխեմաները՝ տեսակների խմբավորումը, հավաքումը, և այլ պարամետրեր, կարող են փոփոխվել կախված համայնքում գոյացող թափոնների բաղադրությունից և մի շարք այլ գործոններից:

Հայաստանի համայնքների կողմից շահագործվում է մոտ 300 աղբավայր,[2] որոնցից ոչ մեկը չի համապատասխանում սանիտարական նվազագույն նորմերին: Դրանք ավելի շուտ, աղբաթափման վայրեր են:[3] Ինչ վերաբերում է աղբավայրերի ստեղծման իրավական հիմքերին, ապա նշված թվով աղբավայրերից միայն 35% դեպքում է առկա ավագանու կամ կառավարության որոշում (տես Պատկեր 2): Աղբավայրերի մեծ մասում տեղանքի ուսումնասիրություն չի կատարվել: Հատկապես գարնանը գրունտային ջրերը անմիջական կոնտակտի մեջ են մտնում աղբի հետ: Աղբավայրերը ապահովված չեն արտաքին ջրերի մուտքից, հիմքերը ծածկված չեն ջրամեկուսիչ շերտով, չի իրականացվում սանիտարա-համաճարակային որևէ միջոցառում, տեղի է ունենում աղբի ինքնայրում, որից առաջացած դիոքսինը և ֆուրանը արտանետվում են շրջակա միջավայր: Մեկ այլ խնդիր է աղբաթափման վայր տանող ճանապարհների անբարեկարգ վիճակը, որն անդրադառնում է աղբատար մեքենաների շահագործման

[2] 2019թ.-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի հետ համատեղ իրականացրել է Հայաստանում թափոնների գոյացման և հավաքման քարտեզի և տվյալների բազայի մշակման պիլոտային ծրագիր: Քարտեզները և ծրագրի վերջնարդյունքները հասանելի են՝ https://ace.aua.am/waste/whm/

[3] Սույն զեկույցի համատեքստում «աղբավայր» եզրն օգտագործվում է աղբի տեղադրման ցանկացած վայր նշելու համար՝ անկախ դրա սանիտարական, ինժեներական, վերահսկման, կառավարման, իրավական կարգավիճակից:



Պատկեր 2 *- Համայնքներում աղբավայրերի ստեղծման իրավական հիմք*
Աղբյուր՝ *Հայաստանում թափոնների գոյացման և հավաքման քարտեզի և տվյալների բազայի մշակման պիլոտային ծրագիր: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն, 2019թ. Քարտեզները և ծրագրի վերջնարդյունքները հասանելի են՝ https://ace.aua.am/waste/whm/*

Աղբավայրերը չունեն ցանկապատ, մեքենաների լվացման կետ, դրենաժային և գազահեռացման համակարգեր, չի կատարվում աղբավայրից հեռացող զտահեղուկի (leachate) ուսումնասիրություն և մոնիտորիգ: Ցանկապատ չլինելու պատճառով, թափոնները տարածվում են աղբավայրի ամբողջ շրջակայքով և դուրս՝ ջրի, քամու, կենդանիների և մարդանց միջոցով: Դրա հետևանքով, աղբավայրում գոյացող թունավոր նյութերը մտնում են սննդի շղթա: Չեն կատարվում աղբավայրերի հզորության և շահագործման ժամկետների որոշման հաշվարկներ, այնտեղ տեղափոխվող թափոնների հաշվառում և հսկողություն աղբի որակի նկատմամբ: Չեն կատարվում նաև վտանգավոր թափոնների նախնական վնասազերծման (pre-treatment) աշխատանքներ, աղբի պարբերական տոփանում, հարթեցում և խտացում:

Գոյություն ունեցող օրենսդրական դաշտը չի ապահովում աղբահանության համապարփակ կառավարումը՝ ներառյալ աղբի տեսակավորումն ու վերամշակումը: Աղբահանության և դրա մատուցման վճարների հավաքագրման գործընթացում գործնականում բացակայում են նաև համայնքների ներքին իրավական ակտերը, աղբահանության կարգերը/կանոնակարգերը, որոնք հաստատվում են ավագանու համապատասխան որոշումներով, անցնում են իրավական փորձաքննություն եւ հրապարակվում են օրենքով սահմանված կարգով(տե՛ս քոմենթը):

Համայնքի ավագանին, սովորաբար, տարեկան բյուջեն հաստատելուց առաջ, օրենքով սահմանված կարգով, հաստատում է տեղական տուրքերի և վճարների չափը, որը հիմք է հանդիսանում բյուջեն կազմելու համար: Մեզ հայտնի չէ այնպիսի համայնք, որը աղբահանության ոլորտում ընդունել է ոլորտը կարգավորող ներքին իրավական ակտ, «որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից» և հրապարակել է օրենքով սահմանված կարգով:

Հանրության հետ աշխատանքը չի կարևորվում: Հաճախ ծառայություն մատուցողների մոտ իշխում է կարծիք, թե իրենք ավելի լավ գիտեն խնդիրը և լուծման ուղիները, իսկ բնակչության հետ աշխատանքը համարում են ժամանակի կորուստ: Համայնքային բյուջեում հանրության իրազեկմանն ու կրթությանն ուղղված միջոցներ չեն նախատեսվում:

Աղբահանությունը համայնքներում իրականացվում է կա'մ համայնքի, համայնքային ձեռնարկությունների, կա'մ մասնավոր հատվածի միջոցով: Սա այն ոլորտն է, որն առավել քան նպատակահարմար է հանրային-մասնավոր համագործակցության համար: Համայնքների գերակշիռ մասը չի աշխատում մասնավոր հատվածի հետ կամ համագործակցությունն անարդյունավետ է: Աղբահանության ծառայությունը համայնքներում չի գրավում մասնավոր հատվածի հետաքրքրությունը բնակչության անբավարար խտության, պայմանագրերի կարճ ժամկետների, չհիմնավորված ցածր սակագների, ինչպես նաև բնակչության հետ աշխատանքում առկա դժվարությունների պատճառով:

ԱՌԱՋԱՐԿ

Հանրային-մասնավոր համագործակցության նպատակը, հանրային ենթակառուցվածքների կամ հանրային ծառայությունների ապահովումն է մասնավոր հատվածի միջոցով:

Հանրային-մասնավոր համագործակցության միջոցով մասնավոր հատվածի ներգրավումն ունի մի շարք առավելություններ: Ծառայությունները մատուցվում են ավելի արդյունավետ և նույն որակի դեպքում՝ ավելի ցածր գնով, հնարավոր է դառնում մասնավոր հատվածի ներդրումները հանրային ոլորտ: Մասնավոր հատվածի ներգրավումն իր հետ բերում է նոր տեխնիկական և մասնագիտական կարողություններ: Կարևոր է, որ հանրայինը պահպանում է սեփականության իրավունքը ենթակառուցվածքի նկատմամբ:

Ստորևր է, որ հանրայ հանրային-մասնավոր համագործակցության երկու մոդել, որոնցից մեկը հիմնված է համայնքային բյուջեից մասնավորն-մասնավորներդրումների դիմաց կանոնավոր վճարումների կատարելու վրա (կառավարման պայմանագիր), իսկ մյուսը՝ ենթակառուցվածքի վարձակալության վրա (վարձակալության պայմանագիր)՝ ապահովելով կանոնավոր վճարումներ համայնքայինի դիմաց մասնավոր ասնավորյինի դի.ա.

Բյուջեի միջոցով



Վարձավճարի միջոցով



Ներկայում համայնքներում աղբահանության ոլորտում մասնավոր հատվածի ներգրավման դժվարությունները.

- Բնակչության ցածր խտություն. համայնքների բնակչությունը փոքրաթիվ են, ուստի ստացած եկամուտները չեն ծածկում ծախսերը, առավելևս չեն կարող ապահովել շահույթ: Մասնավորին շահեկան է ներդրումներ անել ավելի մեծ բանկչություն ունեցող համայնքներում կամ համայնքների խմբում/խմբերում:

- Չհիմնավորված սակագներ. Սակագնի՝ տնտեսապես հիմնավորված հաշվարկը բացակայում է: Սակագները հիմնականում սահմանվում են քաղաքական և սոցիալական նկատառումներից ելնելով: Դրանք զգալիորեն ցածր են այն ծախսից, որը կատարվում է աղբի հավաքման, տեղափոխման և տեղակայման համար, ուստի զգալի ռիսկ է պարունակում մասնավորի համար:

- Բնակչության տեղաշարժ և սոցիալական վիճակ: Այսօր, մասնավոր հատվածը նախընտրում է ընդհանրապես չառնչվել բնակչության հետ վարձավճարների հավաքագրման մասով, ոչ միայն բնակչության կողմից վճարելու պատրաստակամության բացակայության ռիսկի, այլև բնակչության հոսունության պատճառով, բնակչության թվի անընդհատ տատանման պայմաններում: Ուստի ներկայումս մասնավոր հատվածին ձեռնտու է, որ համայնքը կրի վարձավճարների հավաքագրման ռիսկը:

- Կարճաժամկետ պայմանագրեր. Պայմանագրի ժամկետները մասանավոր ընկերությունների հետ չափազանց կարճ են, համայնքների մեծ մասում 1 տարուց ոչ ավելի, որը չի առաջացնում մասնավորի հետաքրքրությունը:

Աղբահանության անմխիթար վիճակի բազմաթիվ պատճառների թվում է համայնքներում ռազմավարական մոտեցման, ներկա վիճակի գնահատման ու ապագա տեսլականի ձևավորման, պատշաճ պլանավորման բացակայությունը:

1.2 Աղբահանության պլանավորման հայաստանյան փորձը

Ընդհանրապես, պլանավորումն անհրաժեշտ է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված՝ բնակչության պահանջին համահունչ գործելու համար: Համայնքային իշխանություններն ու ծառայություններ մատուցողները հաճախ զբաղված լինելով իրենց առօրյա գործունեությամբ՝ ուշադրություն չեն դարձնում ոլորտի միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացմանը:

Հայաստանի համայնքներում եղել են աղբահանության ռազմավարական պլանների մշակման մի քանի փորձեր, հիմնականում՝ միջազգային և տեղական կազմակերպությունների ցուցաբերած աջակցությամբ:

Հայաստանի 33 քաղաքային համայնքների, որոնք աղբահանության խնդիրը համարել են իրենց առաջնահերթություն, ինչպես նաև Վեդու համայնքների միության համար (որի կազմում ընդգրկված էին 15 համայնքներ) 2007-2013 թվականների ընթացքում ԱՄՆ ՄԶԳ «Տեղական ինքնակառավարման» ծարգրերի շրջանակում ամերիկյան «ԱրԹիԱյ ինթերնեյշնլ» և «Քաունթերփարթ ինթերնեյշնլ» կազմակերպությունների օժանդակությամբ մշակվել են համապարփակ ռազմավարական պլաններ: 2013-2019 թվականների ընթացքում «Ուրբան» հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի ևս 11 համայնքների և բնակավայրերի համար (Ախուրյան, Ապարան, Իջևան, Գորիս, Գորայք, Մեղրի, Կապան, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր, Ջերմուկ) մշակվել են աղբահանության ռազմավարական պլաններ՝ հիմնականում կիրառելով ԱՄՆ ՄԶԳ փորձը և մեթոդաբանությունը:

Ռազմավարական այդ պլանների առավելությունն այն էր, որ դրանք վերլուծական և տեղեկատվական կարևոր փաստաթղթեր են՝ մշակված համայնքների հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև շահակիր կողմերի՝ ներառյալ բնակչության ամիջական մասնակցությամբ: Բնական է՝ տեղական և միջազգային կազմակերպությունները հնարավորություններ չունեն աջակցել բոլոր համայնքներին աղբահանության ռազմավարական պլանների մշակման հարցում, ուստի ակնկալվում էր, որ պլանավորման գործընթացը հետագայում կդառնար գործելակերպ գործընկեր համայնքների համար և կընդօրինակվեր այլ համայնքների կողմից: Այնուամենայնիվ, մշտադիտարկումը ցույց է տալիս, որ ծրագրերի ավարտից հետո համայնքները չեն առաջնորդվում մշակված պլանով և չեն մշակում աղբահանության ռազմավարական պլաններ հետագա տարիների համար, իսկ բնակիչները չեն դառնում գործընկեր համայնքների համար:

Բացի միջազգային և տեղական կազմակերպություններից, պլանավորման խնդրին անդրադարձել են նաև համայնքները. աղբահանության խնդիրը ներառվում է համայնքների հնգամյա զարգացման ծրագրերում, սակայն հպանցիկ, համառոտ, ընդհանուր հաշվարկներով և ժամկետներով:

Կարևոր է նշել նաև, որ հատկապես հնգամյա զարգացման ծրագրերում տեղ գտած աղբահանության պլանավորումն անդրադարձել է միայն աղբի հավաքմանն ու աղբավայր հեռացման հարցերին, դուրս թողնելով թափոնների կայուն կառավարման այնպիսի բաղադրիչներ, ինչպես օրինակ՝ տեսակավորված հավաքումը և օգտահանում, վտանգավոր թափոնների կառավարում և այլն:

1.3 Աղբահանության պլանների կառուցվածքը, բովանդակությունը և մշակման մեթոդաբանությունը

1.3.1 Աղբահանության պլանների կառուցվածքն ու բովանդակությունը

Վերլուծելով Հայաստանում նախկինում մշակված աղբահանության պլանները՝ ընդհանուր առմամբ հանգում ենք հետևյալ կառուցվածքին և բովանդակությանը.

1) Նախաբան
2) Առկա իրավիճակի վերլուծություն
   - Ընդհանուր տեղեկություններ համայնքի, բնակչության, աղբահանության կարիքի վերաբերյալ
   - Օրենսդրական դաշտի վերլուծություն. օրենսդրություն, ներքին կանոնակարգեր և որոշումներ
   - Աղբահանության կառավարում. աղբահանություն իրականացնող ընկերության ներկայացում
   - Աղբահանության կառավարման ենթակառուցվածքներ. աղբի ծավալների հաշվարկ բնակչության և իրավաբանական անձանց կողմից, աղբահանության համար անհրաժեշտ մեքենասարքավորումների վերլուծություն
   - Աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման համար ծախսվող աշխատաժամանակի և ցիկլի տևողության, կառավարվող և անկառավարելի աղբի, աղբավայրի վիճակի, աղբի վերամշակման հնարավորությունների վերլուծություն
   - Աղբահանության ֆինանսատնտեսական վերլուծություն՝ ներառյալ եկամուտներ և ծախսեր, վճարների հավաքագրում, աղբի հավաքման, կուտակման, տեղափոխման և տեղակայման ինքնարժեքի հաշվարկ, պայմանագրեր և այլն:
3) Հանրային իրազեկում և մասնակցություն
4) Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն (SWOT)
5) Տեսլական և ռազմավարական նպատակներ, խնդիրներ
   - Համակարգի զարգացում. կառավարում և կազմակերպչական հարցեր,
   - Աղբահանության տեխնիկական միջոցների զարգացում,
   - Ֆինանսական-տնտեսական արդյունավետություն,
   - Հանրային իրազեկություն և մասնակցություն: Սա երկու անգամ կրկնվեց: Տես 3)
6) Գործողությունների պլան
7) Գործունեության կառավարում և գնահատում

Աղբահանության պլանները սկսվում են «Նախաբան»-ով, որը ներառում է ընդհանուր տեղեկատվություն աղբահանության պլանի մշակման գործընթացի և մեթոդաբանության վերաբերյալ: Նախաբանին հաջորդում են տվյալ համայնքում աղբահանության վիճակի մնարամասն ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

Հանրային իրազեկմանն և մասնակցությանը հատկացվում է մի ամբողջ ենթագլուխ, որի նպատակն է պարզել բնակչության ընկալումները, վերաբերմունքը և նախապատվությունները աղբահանության որակի, բնակչության վճարունակության և վճարելու պատրաստակամության, աղբահանության բարելավման հարցում բնակչության իրազեկման և կրթության, աղբի տեսակավորման և վերամշակման վերաբերյալ:

Հաջորդիվ ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունն է (SWOT analysis), որի նպատակն է պարզել աղբահանության իրականացման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:

Հաջորդ մի քանի բաժինները վերաբերում են աղբահանության իրականացման տեսլականի, ռազմավարական նպատակների և խնդիրների սահմանմանը: Դրանց սահմանումն ու փոխկապակցվածությունը ներկայացվում են սխեմատիկ ձևով կամ աղյուսակների տեսքով: Ռազմավարական պլանները ցուցաբերում են կոմպլեքս մոտեցում և հիմնվում են հետևյալ փոխկապակցված ոլորտների զարգացման վրա:

Գործողությունների պլանավորման բաժինը ներառում է նպատակներին և խնդիրներին հասնելու կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների/ծրագրերի նկարագրագրություն, իրականացման ժամանակացույց, պատասխանատուներ և ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ:

Գործունեության կառավարում և գնահատում բաժնում քննարկվում են ռազմավարական պլաններում ընդգրկված գործունեության արդյունավետ կառավարման ցուցանիշներ, որոնք ենթադրում են կոնկրետ չափելի արդյունքներ, որոնց միջոցով կարող է գնահատվել գործողությունների կատարումը աղբահանության պլանի իրականացման ամբողջ ընթացքում:

1.3.2 Աղբահանության պլանների մշակման մեթոդաբանությունը

Աղբահանության նշված ռազմավարական պլանները վերոհիշյալ համայնքներում մշակվել են հետևյալ մեթոդաբանությամբ.

- Սերտ համագործակցություն է հաստատվել համայնքների հետ:
- Համայնքի ավագանու որոշմամբ ստեղծվել են ռազմավարական պլանի մշակման հանձնաժողով և աշխատանքային խումբ (ԱԽ):
- Իրավիճակի վերլուծության համար տրամադրվել են տվյալներ համայնքների կողմից:
- Կազմակերպվել են համայնքային ժողովներ աղբահանության խնդիրների վերհանման նպատակով:
- Ստեղծված ԱԽ-ն սահմանել է վերհանված խնդիրների առաջնահերթությունը Դելֆիի մեթոդով (Հավելված 1)՝ համադրելով ֆինանսական արժեքը, բնապահպանական ազդեցությունը, շահառուների քանակը և հանրային աջակցությունը յուրաքանչյուր խնդրի համար: ԱԽ-անդամները վերապատրաստվել են մեթոդի կիրառման համար:
- Հանձնաժողովի և ԱԽ-ի անդամները քննարկել և հատկորոշել են աղբահանության ուժեղ և թույլ կողմերը:
- Հանձնաժողովի և ԱԽ-ի անդամները սահմանել են ռազմավարական նպատակներ, խնդիրներ և գործողություններ (Հավելված 2):
- Գործունեության կառավարման պլանի գնահատման նպատակով մշակվել են կատարողական ցուցանիշներ (Հավելված 3):

1.4 Եզրակացություն և առաջարկություններ

Հայաստանի համայնքներում աղբահանության կառավարման ռազմավարական պլաններ մշակվել են վերջին 10-12 տարիների ընթացքում տեղական և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և օգնությամբ: Սակայն, այդ պլանավորման փորձն ունեցել է հետևյալ խնդիրները.

- իրավիճակի վերլուծությունը, ծրագրերի նկարագրությունը կատարել են փորձագետներ, ինչը չի հանգեցրել համայնքներում ԿԿԹԿ պլանավորման կարողությունների զարգացմանը,
- համայնքների կողմից տրամադրված տեղեկատվությունը երբեմն հակասական է եղել, հեռու հավաստի և ստույգ լինելուց, իսկ տվյալների հավաքագրման որակի (հավաստիության) ապահովման մեխանիզմներ չեն մշակվել
- չնայած այն հանգամանքին, որ պլանները կոչվում էին ռազմավարական, դրանցում գրեթե անդրադարձ չէր արվում աղբի տեսակավորմանը, վերամշակմանը, օգտահանմանը, ինչպես նաև աղբավայրերին, այն է՝ աղբաթափատեղիներին, ներկայացվող պահանջներին,
- ծրագրի ավարտից հետո համայնքները պլանավորումը չեն դարձրել գործելակերպ, այլ բավարարվել են միայն համայնքի զարգացման ծրագրերում աղբահանության խնդիրը հպանցիկ ներառելով,
- չնայած պլանները մշակվել են մասնակցային եղանակով և համայնքների հետ սերտ համագործակցությամբ՝ սակայն մասնակցային պլանավորումը և աղբահանության ռազմավարությունների մշակումը չի դարձել ոչ համայնքային մշակույթ և ոչ էլ պարտադիր կատարման ենթակա պահանջ,
- մշակված պլանները, որպես կանոն, գործել են ծրագրի շրջանակում, չեն մշակվել մոնիթորինգի և գնահատման հստակ մեխանիզմներ
- աղբահանության պլանավորման որոշակի տարրեր կարելի է տեսնել համայնքի զարգացման հնգամյա պլաններում, ինչպես նաև համայնքային բյուջեյում սանմաքրման և աղբահանության

ծախսերի հաշվարկման, վարձավճարների հավաքագրման ամսական և եռամսյակային պլանավորվորման և հավաքագրման մասով: Նշված հաշվարկները, սակայն, պետք է բխեն մի շարք գործոններից, ինչպես օրինակ, թափոնների կրճատման, թափոնների տեսակավորված հավաքման և վերամշակման, վնասազերծման և օգտահանման, աղբավայրերի ավելի էկոլոգիապես համահունչ շահագործման հնարավորությունները, որոնք հիմնականում չեն հաշվի առնվում:

Առաջարկություններ.

- Համայնքները պետք է մշակեն ԿԿԹ կառավարման տեղական պլան, որպես պարտադիր փաստաթուղթ և հաշվետու լինեն մշակված և ընդունված պլանը իրականացնելու առումով:
- Մշակվելիք պլանները պետք է մշակվեն ԿԿԹ կայուն կառավարման սկզբունքներով (թափոնների հիերարխիա)
- Պատասխանատու պետական մարմինները պետք է մշակեն ծրագրեր բարձրացնելու համայնքների ԿԿԹ կառավարման պլանավորման կարողությունները: Դա համայնքներին թույլ կտա ինքնուրույն, սեփական ուժերով մշակել աղբահանության պլանները:

Հավելված 1. Հայաստանում նախկին ԿԿԹ պլանավորման ժամանակ առաջնահերթության սահմանման ցուցանիշներ

ՑՈՒՑԱՆԻՇ	Գնահատման սանդղակ	Միավոր	Կշիռ
Գնահատված դրամական արժեքը	< 500,000 դրամ	4	
	500,00- 2,500,000 դրամ	3	
	2,500,000 – 5,000,000 դրամ	2	
	> 5,000,000 դրամ	1	
Բնապահպանական և առողջապահական ազդեցությունը	բացասական	0	
	չկա	1	
	ցածր	2	
	միջին	3	
	բարձր	4	
Շահառու բնակչության թիվը	< 25%	1	
	25%-50%	2	
	50%-75%	3	
	75%-100%	4	
Հանրային աջակցություն	չկա	1	
	ցածր	2	
	միջին	3	
	բարձր	4	

Հավելված 2. Հայաստանում նախկին ԿԿԹ պլանավորման ժամանակ մշակված ռազմավարության տեսլականի, նպատակների և խնդիրների օրինակ

ՏԵՍԼԱԿԱՆ. Աղբահանության արդյունավետ համակարգի ստեղծում՝ հիմնված աղբի կրճատման, վերամշակման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված կայուն գործելակերպի, ֆինանսապես կենսունակ կառավարման և հանրության աջակցության և մասնակցության վրա

Նպատակ 1 Բարելավել աղբահանության կառավարման համակարգը և ձևավորել համայնքային օրինական դաշտ:

Նպատակ 2 Ուժեղացնել աղբահանության կառավարման ենթակառուցվածքները քաղաքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու համար[a] հիմնելով աղբի կրճատման, վերամշակման, վնասազերծման և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված մշտական գործընթաց:

Նպատակ 3 Հասնել աղբահանության կառավարման ֆինանսական կայունությանը:

Նպատակ 4 Ապահովել բնակչության մշտական և հետևողական իրազեկումը և մասնակցությունը աղբահանության կառավարման գործընթացում:

ԾՐԱԳԻՐ № X (անվանումը)

Առաջնահերթության միավորը

X

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

N/N	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ/ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	ՀԱՄԱԿԱՐԳՈՂ/ԿԱՏԱՐՈՂ	Ժամկետ				Ժամկետ			
1.1.1										
1.1.2										
1.1.3										
1.1.4										
1.1.5										

ՍՊԱՍՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

1.

2.

3.

Հավելված 3. Կատարողական ցուցանիշներ

Կատարողական ցուցանիշներ	Չափանիշների սահմանումը և չափման միավորը	Նպատակակետ				
		202.թ	202..թ	202..թ	202..թ	202..թ
1. Սպասարկվող բնակչության հարաբերական թիվը	Սահմանում: Աղբահանությունը ընդգրկում է ավելի շատ թաղամասեր և այդպիսով սպասարկվում է բնակչության ավելի շատ հատվածներ Միավոր: Սպասարկվող բնակչության և ընդհանուրի հարաբերությունը՝ արտահայտած տոկոսներով					
2. Փաստացի հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակը արտադրված աղբի նկատմամբ	Սահմանում: Արտադրված աղբի այն մասի ավելացումը, որը հավաքվում է և տեղափոխվում աղբավայր: Միավոր: Փաստացի հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակության հարաբերությունը քաղաքում արտադրված և աղբավայր տեղափոխման ենթակա աղբի քանակության վրա՝ արտահայտած տոկոսներով:					
3. Աղբի հավաքման և տեղափոխման հաճախականությունը 1) ԲԲՇ	Սահմանում: Աղբամանների դատարկման և աղբավայր տեղակայման հաճախականությունը միավոր ժամանակամիջոցում£ Միավոր: Անգամ/օր					
2) Անհատական բնակելի տներ	Սահմանում: Աղբամանների դատարկման և աղբավայր տեղակայման հաճախականությունը միավոր ժամանակամիջոցում: Միավոր: Անգամ/օր					

4. Աղբամանների տարողունակությունը ԲԲՇ-երում և սեփական տներում կիրառվում է	Սահմանում: Աղբամանների տարողունակության կամ քանակի ավելացում Միավոր: Աղբամանների տարողունակության և արտադրվող աղբի քանակի հարաբերությունը՝ արտահայտած տոկոսներով					
5. Ծառայության վարձավճարների հավաքագրման հարաբերական աճը	Սահմանում: Վարձավճարների հավաքման ավելացում Միավոր: Վարձավճարների փաստացի հավաքված և պոտենցիալ (ամբողջ համայնքը սպասարկելու դեպքում) չափերի հարաբերությունը՝ արտահայտած տոկոսներով:					
6. Չափանիշ: Ինքնածախսածածկման ապահովում	Սահմանում: Ծառայության ինքնարժեքի իջեցում և եկամուտների ավելացում: Միավոր: Վարձավճարներից ու վերամշակման ենթակա թափոնների վաճառքից ստացված եկամուտների և ծառայության մատուցման ընդհանուր ծախսերի հարաբերությունը՝ արտահայտած տոկոսներով:					
7. Քաղաքացիների գոհունակությունը ծառայությունների մատուցման վերաբերյալ	Սահմանում: Կատարվող հարցումների համաձայն՝ այն շահառուների ավելացումը, որոնք գոհ են ծառայության մատուցման մակարդակից: Միավոր: Հարցում արված գոհունակ շահառուների թվի հարաբերությունը բոլոր շահառուների թվի վրա՝ արտահայտած տոկոսներով:					